ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47-Ն

ք.Իջևան, Երևանյան 5, Հեռ, (0263)32138

22 փետրվարի 2011թ,

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26/21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 26/21 հասցեում գտնվող, առևտրի սրահի սեփականատեր Արթուր Օհանյանը / սեփականության վկայական թիվ 2739616/ առևտրի սրահի շենքի և հողամասի գործառնական նշանակությունը փոխելու խնդրանքով: Իջևան քաղաքի գլխավոր հատակագծի գոտևորման նախագծի համաձայն շենքը կառուցված է բնակելի կառուցապատման գործառնական նշանակության գոտում:

Արթուր Օհանյանը Անկախության փողոցի թիվ 26/21 հասցեում ունի 49քմ հողամաս, որի վրա կառուցել է երկհարկանի առևտրի սրահի շենք: Շենքը ապահովված է բոլոր ենթակառուցվածքներով՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, ունի սանհանգույց, լոգարան: Շենքն իր չափանիշներով համապատասխանում է բնակելի տներին ներկայացվող նորմատիվ պահանջներին:

Հաշվի առնելով վերոհիշյալը և բնակչի խնդրանքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 26/21 հասցեում գտնվող և սեփականության իրավունքով Արթուր Օհանյանին պատկանող 49քմ հողամասը հանել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքից և դասել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքը:
2. Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 26/21 հասցեում գտնվող և սեփականության իրավունքով Արթուր Օհանյանին պատկանող առևտրի սրահի շենքը հանել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության շենքերի շարքից և դասել բնակելի նշանակության շենքերի շարքին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ